ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 93/10

Քաղ. Երեւան 27 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հունվարի 27-ի նիստում (արձանագրություն N76/2) քննարկեց Zino Davidoff S. A. ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2009թ. նոյեմբերի 16-ի բողոքը «DAVIDOFF ADVENTURE» IR 942330 միջազգային բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Կրկնական փորձաքննության որոշման հիմք են հանդիսացել «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 15.1-րդ եւ 93.1-րդ կետերը, համաձայն որոնց նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ծառայությունների համար ավելի վաղ առաջնությամբ գրանցված հայտարկված նշանին շփոթելու աստիճան նման «ADVENTURE» IR 7798 ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքում նշված են փաստարկներ հիշյալ ապրանքային նշանների գրաֆիկական եւ հնչյունային տարբերության մասին: Արձանագրված է նաեւ այն փաստը, որ բողոքարկողի կողմից 14.07.2009թ. դիմում է ներկայացվել Բողոքարկման խորհուրդ N 7798 գրանցումը՝ համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, չօգտագործման պատճառով վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Կոլեգիայի անդամի կողմից արձանագրվեց, այն փաստը, որ Բողոքարկման խորհրդի 23.10.2009թ. N 76/09 որոշմամբ ապրանքային նշանի IR 7798 գրանցման

գործողությունը վաղաժամկետ դադարեցվել է ՀՀ տարածքում ԱՕՄԴ 3–րդ դասի ապրանքների համար, չօգտագործման պատճառով։

Կոլիեգիայի անդամը նշեց նաեւ, որ վերոհիշյալը հիմք կարող է հանդիսանալ բողքի բավարարմանը, քանի որ այս դեպքում «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 15.1-րդ եւ 93.1-րդ կետերը կիրառելի չեն։

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1 ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել Zino Davidoff S. A. ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2009թ. նոյեմբերի 16-ի բողոքն ամբողջությամբ, չեղյալ ճանաչել 2009թ. սեպտեմբերի 30-ի կրկնական փորձաքննության որոշումը եւ գրանցել «DAVIDOFF ADVENTURE» (հայտ IR 942330) միջազգային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում՝ հայտարկված բոլոր ապրանքների նկատմամբ։

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան